

ՆՅՈՒ ՅՈՐՔԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՄԲԻ 25-ԱՄՅԱԿԸ

«Մեր սուրբ տաճարներեն դեպի երկինք բարձրացող երգված խոսքը ամենահարապատ կերպն է աղոթքի:

...Փա՜ռք հայոց երաժշտական հանճարին: Կեցցե՛ «Կոմիտաս»-ի անվան ձեր երգչախումբը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վերոհիշյալ տողերով է սկսվում Նյու Յորքի «Կոմիտաս» երգչախմբի ստեղծման 25-ամյակի առթիվ լույս տեսած հուշամատյանի երկհատորյակը:

Երգչախումբը ստեղծվել է 1948 թ.: Կոստանդնուպոլսից Նյու Յորք են ժամանում երեք երաժշտասեր երիտասարդներ՝ Իսահակ Աբրահամյանը, Հովհաննես Հեփշենը և դոկտոր Արա Պոհճալը, որոնք, իրենց խնդրանքով, Նյու Յորքի հայկական եկեղեցիներից մեկում երգում են Կոմիտասյան պատարագը, որն արժանանում է մեծ ընդունելության: Այս հաջողությունը ոգևորում է նրանց: Երեք հոգուց բաղկացած այդ խումբը աստիճանաբար մեծանում է և հայկական հոգևոր ու աշխարհիկ երգերով պարբերաբար հանդես է գալիս Նյու Յորքի և Նյու Ջերսիի եկեղեցիներում, ելույթներ ունենում ազգային այլ հանդիսությունների ժամանակ:

Գեղեցիկ ձևավորված այդ հուշամատյանի կազմի վրա Կոմիտաս վարդապետի նկարն է՝ «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյակը» մակագրությամբ: Առաջին հատորը բացվում է Ն. Ս. Օ. Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա-ի լուսանկարով, ապա հաջորդում է Վեհափառի հայրապետական օրհնության և ողջույնի խոսքը՝ ուղղված Միացյալ Նահանգների հայոց առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախմբի անդամներին: Հատորում ընդգրկված է Վեհափառ Հայրապետի կենսագրությունը: Այստեղ տեղ են գտել «Կոմիտաս» երգչախմբի նախագահ ամերիկահայոց արևելյան թեմի հոգևոր առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի լուսանկարը և պատգամ նամակը «Կոմիտաս» երգչախմբի հիմնադրության 25-ամյակի առթիվ, ինչպես նաև 1958—1966 թթ. շրջանում «Կոմիտաս» երգչախմբի նախագահ Գեր. Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի նամակը՝ ուղղված «Կոմիտաս» երգչախմբին, որտեղ նշվում է նրա ղեկավար մարմնի անդամների վավերացումը հետևյալ կազմով.

Հովհաննես Հեփշեն՝ ատենապետ.
Վարուժան Արսլանյան՝ փոխատենապետ.
Տիգրան Չերչյան՝ ատենադպիր.
Վահե Հաճըլյան՝ փոխատենադպիր.
Հրանդ Սարուխան՝ գանձապահ.
Բենիամին Սողիկյան՝ խորհրդական.
Իսահակ Աբրահամյան՝ ղեկավար:

Երկհատորյակում տեղ են գտել նաև «Կոմիտաս» երգչախմբի առաջին նախագահ (1958 թ.) երջանկահիշատակ Տ. Մամբրե արքեպ. Գալֆայանի և ամերիկահայոց արևելյան թեմի նախկին առաջնորդ Գեր. Տ. Տիրան արքեպ. Ներսոյանի լուսանկարները, որոնց հովանավորությունը հաճախ վայելել է «Կոմիտաս» երգչախումբը: Երկհատորյակի նյութերը Մերի Սելվինապյանի գոր-

ծակցությամբ հավաքել և դասավորել է Օնիկ Տեռքմեճյանը, որ տարիներ շարունակ երգչախմբի ու մայր դիվանի ատենապետը և խմբի մեներգիչն է եղել: Հուշամատյանի գեղարվեստական ձևավորումը կատարել է Պոլ Սաքսուրյանը:

Այս շքեղ երկհատորյակում ի մի են բերվել տարբեր տարիներին երգչախմբի ունեցած կանական ելույթների առթիվ մամուլում հայերեն և անգլերեն լեզուներով լույս տեսած գրախոսականներ, տեղեկություններ, բազմաթիվ լուսանկարներ և այլն:

1958 թվականի մարտ ամսին երգչախումբը պաշտոնապես կազմավորվել է և անցել Նյու Յորքի հայոց առաջնորդարանի հովանավորության տակ՝ ստանալով «Առաջնորդարանի Կոմիտաս երգչախումբ» անունը: Սկզբնական շրջանում այն բաղկացած է եղել միայն տղամարդկանցից: Երգչախմբի նպատակն է եղել ամերիկահայությանը ծանոթացնել Կոմիտասի ստեղծագործությանը, ծառայել հայ մշակույթին, սեր առաջացնել դեպի հայ երգն ու երաժշտությունը: Հետագայում երգչախումբը իր շարքերը համալրել է շնորհալի երգչուհիներով: Տոնական օրերին կամ կանական այլ առիթներով խումբը իր մասնակցությունն է բերել թե՛ կրոնական հանդիսություններին և թե՛ աշխարհիկ բնույթի այլ միջոցառումների: «Մայր երկրե հեռու, գաղութային կյանքի մեջ, մեր ազգային և մշակութային կյանքի պահպանման գլխավոր ազդակներեն մեկն ալ հայ երգն է», գրում է «Պայքար» թերթը:

Երգչախումբը իր ծրագիր-կանոնագրի մեջ, բացի ելույթներից, ընդգրկել է նաև գեղեցիկ և օգտակար նպատակներ՝ հավաքել հին ու նոր երգահանների նկարները, կենսագրությունները, իրենց ստեղծագործությունների նմուշներով դրանք դասավորել և ամփոփել մի ծավալուն գրքի մեջ որպես հիշատակարան և այն դարձնել հանրության սեփականությունը:

1962 թ. Ամերիկայի արևելյան թեմի հայոց առաջնորդարանի հրապարակած հաղորդագրության մեջ հայտնվում է, որ տեղի պիտի ունենա հուշահանդես՝ նվիրված Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Տ. Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի կյանքին ու գործին՝ նրա մահվան տասներորդ տարելիցի առթիվ, և պիտի կարդացվի Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը: Գրքում տպագրվել է նաև Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի ամփոփ կենսագրությունը: Հետագա էջերում նկարագրված է Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունը, որին մեծ հաջողությամբ մասնակցել է նաև «Կոմիտաս» երգչախումբը:

Հայ Բարեգործական Ընդհանուր Միության փառատոնի առիթով ժողովածուում կետեղվել է Մետրոպոլիտեն օպերայի մեներգչուհի Լիլի Չուգասպյանի լուսանկարը, տաղանդավոր սփյուռքահայ երգահան Համբարձում Պերպերյանի կենսագրությունը և հայ մշակույթի հայտնի գործիչների խոսքն ու գնահատանքը նրա արվեստի մասին:

«Կ. Պոլսո Հայոց Պատրիարքության 500-ամյակը» վերնագրով ծավալուն հոդվածում նշվում է. «Ղալաթիո և Արմաշի դպրեվանքերը, որ քանի մը տասնյակ արժանավոր եկեղեցականներ տված են ազգին, Պոլսո Պատրիարքության փառքն ու պարծանքն են, նույնպես և Պոլսո և գավառներուն մեջ կառուցված 1600-են ավելի մեծ թվով հայ դպրոցները...»:

Հայ Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադրման 60-ամյակի առթիվ հատորում կետեղված է նրա հիմնադիր-նախագահ Պողոս Նուպարի լուսանկարը:

1968 թվականը հիշարժան տարեթիվ դարձավ բովանդակ Ամերիկայի հայկական գաղթօջախի համար: Երկրորդ անգամ Նյու Յորք ժամանեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Ինչպես Վեհափառ Հայրապետի 1960 թ. կատարած առաջին այցի, այնպես էլ երկրորդ այցի ժամանակ «Կոմիտաս» երգչախումբը կատարեց պատարագի երգեցողությունը: Հատորում տեղ գտած մի քանի էջեր և բազմաթիվ լուսանկարներ վերաբերում են Հայոց Հայրապետի այցելությանը և այդ առթիվ Նյու Յորքի հայոց Մայր տաճարի օծման արարողությանը. Վեհափառ Հայրապետը և Առաջնորդ Սրբազանը պատարագից հետո շրջապատված «Կոմիտաս» երգչախմբի անդամներով և այլն:

Հուշամատյանում հրատարակված է Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Նյու Յորքում տեղի ունեցած գրական-գեղարվեստական մի երեկույթի ծրագիրը՝ մասնակցությամբ «Կոմիտաս» երգչախմբի: Երգչախումբը ելույթներ է ունեցել նաև Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց Պատրիարքների՝ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանի և Տ. Եղիշե արքեպ. Տերտերյանի Նյու Յորք կատարած այցելությունների առթիվ:

«Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի այցելությունը Վատիկան» խորագրի տակ հատորում կետեղված է մի լուսանկար հետևյալ մակագրությամբ. «Հայ և կաթոլիկ եկեղեցվո երկու քահանայապետները Վազգեն Ա և Պողոս Զ երկու հպար տարիներու պատմական առաջին հանդիպում»: Հուշամատյանում կետեղված են նաև մի

շարք լուսանկարներ և ծավալուն հոդվածներ՝ նվիրված Ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին: Նշված է նաև Մխիթար Աբբահոր 300-ամյակը:

Անցնող 25 տարիների ընթացքում «Կոմիտաս» երգչախմբի նվիրյալ խմբավարներն են եղել հետևյալ անձինք. հիմնադիր և ղեկավար Իսահակ Աբրահամյան (երգչախմբի սկզբնավորումից մինչև 1963 թ.). դարձյալ հիմնադիր և ատենապետ Հովհաննես Հեփշեն (1963—1966), դոկտ. Արթուր Միսյան (1966—1981) և Քրիս Գալֆյան, որը 1977 թ. փոխխմբավար էր և 1981 թ. առ այսօր ղեկավարում է երգչախումբը:

Երկհատորյակի «Անմահներ հայ երաժշտական պանթեոնին» բաժնում կազմողները ի մի են բերել հայ հին և ժամանակակից սովետահայ ու սփյուռքահայ երգահանների կենսագրությունները և լուսանկարները:

Հուշամատյանում տեղ են գտել երգչախմբի պաշտոնական հրավերները՝ ուղղված նշանավոր մարդկանց, և վերջինների, ինչպես նաև մի շարք կազմակերպությունների ջերմ խոսքերը «Կոմիտաս» երգչախմբի կազմակերպիչների ու ղեկավարների հասցեին: Երկհատորյակում երևում է, թե ինչպիսի դժվարություններով է ստեղծվել և պահպանվել երգչախումբը: Տարբեր մասնագիտության տեր մարդիկ, «հայ երգի սերեն վառված հոգիներ», անտեսելով հավար ու մի դժվարություն, շաբաթը երկու անգամ փորձի էին հավաքվում: Այդ բոլորը «ոչ թե միայն նվիրում կամ զոհողություն կպահանջե, այլ պարզապես հերոսություն է», գրում է «Պայքար» թերթը:

Ամերիկայի ազգային առաջնորդարանի նախաձեռնությամբ «Կոմիտաս» երգչախումբը 1961 թ. մեծ համերգով հանդես է եկել Նյու Յորքի Թաուն Հոլ դահլիճում: Այդ առթիվ «Պայքար» թերթը երգչախմբի ղեկավար Հովհաննես Հեբշենի մասին հետևյալն է գրել. «Պր. Հեբշեն ոչ միայն քաջություն, այլև ձեռնհասություն ունի, Նյու Յորքի պես բավական բծախնդիր հասարակության մը առաջ, այդպիսի մեծ խումբ մը ղեկավարելու: Խորապես շնորհավորելի է ան»: Համերգի ժամանակ կատարվել են Կոմիտասի «Ինչո՞ւ Բինգյոլը մտար», «Սուսան Սըմբուլ», «Կալի երգը», Չարենցի խոսքերով գրված Հ. Պերպերյանի «Ես իմ անուշ Հայաստանի», Աշոտ Սաթյանի «Արդյոք գիտես դու», Հ. Մեհրաբյանի «Խնձորի ծառի տակին» երգերը և այլ խմբերգեր: Համերգը մեծ խանդավառություն է առաջացրել Նյու Յորքի և նրա շրջակայքի հայաշատ կենտրոններում:

Հետագայում նման ելույթներ հաճախ են տեղի ունեցել: Երգչախումբը հանդես է եկել նաև ռադիոյով և հեռուստատեսությամբ, տարբեր առիթներով իր մասնակցությունն է բերել սշակութային միջոցառումների, հոբելյանական տոնակատարությունների և այլն:

Ամերիկայում մեր շրջագայության ժամանակ մեկ բախտ վիճակվեց 1977 թվականի օգոստոսի 15-ին այցելել Նյու Յորքի Ս. Վարդան փառահեղ Սայր եկեղեցին և միաժամանակ վայելել «Կոմիտաս» երգչախմբի կողմից պատարագի հոգեվայլ կատարումը:

«Կոմիտաս երգչախումբը ունի շուրջ 85 անդամներ,—գրում է ամերիկահայ մամուլը, —հետևաբար շուրջ 85 հայ ընտանիքներ... և նրանց կավակները կմնան երաժշտություն ստեղծած հայեցի մթնոլորտի մեջ, կմնան հայության մեջ, փոխանակ երթալու և անդամակցելու օտար միությանց»:

Ինչպես նշված է երկհատորյակում, ամեն տեղ է «Կոմիտաս» երգչախումբը. «Առաջնորդարանեն Հայ բարեգործական միություն, մտավորականեն մինչև ազգային բարերարը, «Կոմիտաս» երգչախումբը հոն է միշտ՝ գիտակից իր պատկանած ազգին արժեքներուն»:

Արդարև, մի ամբողջ քառորդ դար երգչախումբը լավագույն կերպով է կատարել իր մշակութային և հայապահպանման առաքելությունը՝ ցրված հայությանը և օտարներին հաղորդակից դարձնելով հայ անկորընչելի հանճարի արգասիքը հանդիսացող հայ երգին: Իր գոյության 25-ամյակի առթիվ հրատարակված հիշյալ երկհատորյակը պերճախոս վկան է նրա բեղմնավոր գործունեության: Տեղի սղությունը մեզ հնարավորություն չի տալիս ներկայացնելու բովանդակ հաշվեկշիռը այդ գործունեության: Նշենք միայն, որ իր առաջին տասնամյակի ընթացքում երգչախումբը Կոմիտաս վարդապետի պատարագը կատարել է 146 անգամ: Նույն ժամանակահատվածում տարբեր հանդիսությունների ընթացքում կատարվել են 28 հայ երգահանների ստեղծագործություններ՝ շուրջ 100 խմբերգ, զուգերգ և մեներգ, որոնցից 35-ը Կոմիտասի ստեղծագործություններից: Բավական է նշել, որ իր քառորդդարյա գոյության ընթացքում երգչախումբը 336 անգամ կատարել է հայոց պատարագի երգեցողությունը, պատկառելի մի թիվ, որի մեջ դեռ չեն մտնում նրա բազմաթիվ ելույթները տարբեր առիթներով Նյու Յորքում և հեռավոր քաղաքներում:

Գնահատելի է նույնպես այն, որ խումբը երբեք չի մոռանում մեծարելու իր հիմնադիր անդամների հոբելյանները և կամ իր հարգանքի տուրքը մատուցելու անդարձ մեկնած անդամների հիշատակին: «Այս

մատյանը չի վաճառվիր, այլ նվիրված է հայ երաժշտական Պանթեոնի բազմերախտ մշակներու խնկելի հիշատակին»: Գնահատանքի այս տողերով է բացվում հուշամատյանի առաջին գիրքը: Խումբը շքեղ հանդիսությամբ և ճոխ համերգով նշել է երգչախմբի հիմնադիր և առաջին խմբավար Իսահակ Աբրահամյանի 50-ամյա ազգային և եկեղեցական գործունեությունը 1973 թ., երախտագիտությամբ մեծարել է խմբավար դոկտ. Արթը Միսյանի վաստակը և այլն: Գրքում միաժամանակ ամբողջ մի էջ հատկացված է կյանքից անդարձ մեկնած երգչախմբի անդամների հիշատակին: Պլպլացող մի մոմի նկարի ներքո գրված է. «Ափ մը խունկ անոնց խնկելի հիշատակին»:

Հուշամատյանում երգչախմբի հնագույն անդամների և մահացածների շարքում նշված է նաև հանգուցյալ Արմեն Կիրակի անունը, որը ռումինահայ հայտնի տենոր, հայկական և իտալական երգերի հմուտ կատարող Կիրակ Սագզյանն է: 1945 թ. Երևանում նա համերգներ է տվել, երգել է նաև Իտալիայում և Բուենոս Այրեսում ու հեղինակել բազմաթիվ ձայնասկավառակներ: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել 1926 թ. Բուխարեստում հիմնված մյուս «Կոմիտաս» երգչախումբը, որը իր վերելքի շրջանում ունեցավ մինչև 120 անդամ-անդամուհիներ, որոնց հետ միասին հայկական հանդիսությունների ժամանակ իր մեներգներով հանդես էր գալիս հետագայում Նյու-Յորքի «Կոմիտաս» երգչախմբի անդամ Արմեն Կիրակը:

Շուրջ 600 էջերից բաղկացած և հարյուրավոր հին ու նոր նկարներ ու պատճենահանված վավերագրեր ընդգրկող այս կոյգ հատորները արժեքավոր են ոչ միայն հայ երաժշտության, այլև հայ գրականության և ընդհանրապես հայ մշակույթի պատմության տեսակետից: Մատյաններում տեղ են գտել կոմիտասագետ Հակոբ Ասատուրյանի հայ պատարագին և Կոմիտասին նվիրված ներհուն ուսումնասիրությունները, Ֆերտինանտ Գայմագամյանի «Ամերիկահայ երաժշտական կյանքը 60-ամյակին. հետադարձ ակնարկներ» փաստալից հոդվածը, Մարիա Դավիթյանի «Կոմիտաս» երգչախմբի կյանքն ու գործը» գրվածքը, ինչպես նաև մեծ Կոմիտասի աշակերտ Վարդան Սարգսյանի նամակները՝ ուղղված Գեր. Տ. Տիրան արքեպ. Ներսոյանին և Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին: Հուշամատյանում մեջ է բերված ականավոր հայագետ Անտուան Մեյեի հայոց այբուբենին նվիրած գնահատական տողերը, հրատարակվել է Մաղաքիա արքեպ. Օրմանյանի «Ծիսական բառարան»-ից մի հատված հինգ տաղավարների նշանակության մասին, Կ. Պոլսի հայոց Պատրիարքության հիմնադրման 500-ամյակի առթիվ կետեղվել է նաև Կ. Պոլսի պատրիարքների 500 տարիների գավազանագիրքը, Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանի հոբելյանի առթով հրապարակվել է ականավոր հայագետ հայր Ներսես վրդ. Ակինյանի հոդվածը՝ նվիրված Գարեգին Հովսեփյանի գիտական վաստակին, անգլերենով բերված է հայ պատմության ժամանակագրությունը Ուրարտուից մինչև Նվարսակի պայանագիրը՝ 481 թ. և այլն, և այլն:

Հուշամատյանն անդրադարձել է նաև Հայաստանի պետական երգչախմբի պսակավոր խմբավար Հովհաննես Չեքիջյանի ժամանումին Նյու Յորք: Նա վերջերս Նյու Յորքից ստացած լինելով հուշամատյանից մի օրինակ և ծանոթացած լինելով նրա բովանդակությանը՝ «Կոմիտաս» երգչախմբի հրատարակած հիշյալ գրքի մասին հետևյալ կարծիքը հայտնեց մեզ.

«Շատ լավ և շնորհակալ գործ են արել: Ես գնահատում եմ այդ աշխատանքը: Երկհատորյակը թերթելիս ամբողջական պատկերացում ես կազմում երգչախմբի ստեղծման, կարգացման և գոյատևելու բովանդակ պատմությանը: Գրքում չկան պատահական մարդկանց անուններ, բոլորն էլ ինչ-որ ձևով կապված են երգչախմբի պատմությանը»:

1981 թ. «Կոմիտաս» երգչախմբի կատարմամբ լույս տեսան նաև մի կոյգ ձայնապնակներ Կոմիտասյան պատարագով և Ծննդյան Ջրօրհնեքի արարողություններով՝ քահանայի և սարկավագի ամբողջական բաժիններով:

Սիրողական այս խումբը այսօր էլ նվիրումով շարունակում է ազգասիրական իր մեծ գործը: Թող շատ ապրեն երգչախմբի հիմնադիրներն ու հովանավորողները, խմբավարներն ու ղեկավարները և առհասարակ բոլոր ժրաջան անդամ-անդամուհիները, հայ երգը բարձր մակարդակով հային և օտարին մատչելի դարձնելու, այլև նման արժեքավոր մի գանձարան-հուշամատյան հրատարակելու համար:

ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ԺԱՄԿՈՉՅԱՆ